

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
АРМЯНСКО-РОССИЙСКИЙ МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ "МХИТАР ГОШ"  
"MKHITAR GOSH" ARMENIAN-RUSSIAN INTERNATIONAL UNIVERSITY

**«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ»**  
ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԴԱԾՆԵՐ

**“МХИТАР ГОШ”**  
НАУЧНЫЕ СТАТЬИ

**“MKHITAR GOSH”**  
SCIENTIFIC ARTICLES

2016, 2(45)

## ՕԺՏՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԴՊՐՈՑՈՒՄ

### ԹԱՄԱՐԱ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու



**Օ**ժտված երեխաների կրթության և դաստիարակության խնդիրները միշտ էլ եղել են և կլինեն արդիական, քանի որ հասարակության զարգացումը և բարեկեցությունը մեծապես կախված է եղել

մարդկային ռեսուրսների զարգացումից:

Մեծաթիվ ուսումնասիրություններ են կատարվել օժտված երեխաների շրջանում տարբեր մասնագետների կողմից, բայց մինչև այսօր այդ հիմնահարցը լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Հատկապես կարևոր է օժտված երեխաների կրթության և դաստիարակության խնդիրը, քանի որ, համեմատած երկրի բնական և տնտեսական ռեսուրսների հետ, ազգի մտավոր ռեսուրսն այսօր առավել կարևոր է:

Մանկավարժության և հոգեբանության խնդիրն է վաղ բացահայտել այդ երեխաներին, ախտորոշել, մշակել նոր ծրագրեր նրանց հետ տարվող աշխատանքի համար՝ հաշվի առնելով նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Գիտական գրականության մեջ նշվում է, որ յուրաքանչյուր տասներորդ երեխան օժտվածություն ունի, և մենք պետք է աշխատենք նրա հետ: Այդ խնդրի ոչ ճիշտ լուծման, կամ անտեսման դեպքում լուրջ դժվարություններ կառաջանան նրա անձի ձևավորման, զարգացման, հարմարման և հասարակություն ինտեգրվելու գործընթացներում:

Երեխաների օժտվածության խնդրին երկու մոտեցում կա.

1. Բոլոր երեխաներն օժտված են,
2. Օժտված երեխաները չափազանց քիչ են

[5]:

Մեր կարծիքով՝ երկու մոտեցումներին էլ կարելի է վերաբերվել որոշ վերապահումով:

Մանկական տարիքում օժտվածությունը կարելի է հիմք դիտել հետագա տարիների համար, օրինակ՝ նախադպրոցական տարիքը:

Օժտված մարդիկ կազմում են բնակչության 2.5%-ից մինչև 20%-ը: Ըստ համաշխարհային առողջապահական կազմակերպության բնութագրման՝ այն երևույթները, որոնք չենք հանդիպում մեծամասնության մոտ, համարվում են նորմայից շեղումներ, երբեմն էլ անվանում ենք դեխանտ (լատ.-deviato-շեղում) [1, էջ 23]:

Մանկավարժական և հոգեբանական գիտական գրականության մեջ ուսումնասիրության առարկա է եղել օժտվածության հիմնահարցը [4, 152], սակայն մինչև այսօր էլ այն կարիք ունի խոր և համակողմանի քննության, քանի որ կյանքի, տնտեսության, կրթության, դաստիարակության, տեխնոլոգիաների փոփոխությունները պահանջում են նոր մոտեցումներ:

Այս խնդրով զբաղվել են Լ. Վիգոտսկին, Բ. Տեպլովը, Ն. Լեյտեսը, Լ. Վենգերը, Է. Գոլուբևան, Ա. Մելիք-Փաշաևը, Լ. Գրիգորյանը և այլք:

1972 թ. ԱՄՆ-ում Կրթության գծով կոմիտեն հրապարակեց հետևյալ ձևակերպումը. «Օժտված և տաղանդավոր կարելի է համարել այն երեխաներին, որոնք մասնագետների գնահատմամբ իրենց բացառիկ ընդունակություններով ցուցադրում են բարձր նվաճումներ մեկ կամ մի քանի ոլորտներում» [4, էջ 153]:

Յուրաքանչյուր ազգ ունի իր օժտված երեխաները: Այդպիսի երեխաներ կան արտասահմանյան երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում: Մեծ թիվ են կազմում օժտված երեխաները նաև Հայաստանի Հանրապետությունում: Այդ երեխաները սովորում են Երևանի Ա. Շահինյանի անվան մաթեմատիկական թեքումով դպրոցում, «Զվանտ» և «Ֆոտոն» (Գյումրի) վարժարաններում, Անանիա Շիրակացու անվան ճեմարանում Զայկովսկու անվան երաժշտական քո-

լեջում, արվեստի և երաժշտական դպրոցներում, Հայաստանի և Արցախի շրջանների և գյուղերի դպրոցներում:

Կարևորն այն է, որ ժամանակին հայտնաբերենք ու բացահայտենք այդ երեխաներին և օգնենք նրանց ինտեգրվելու ընտանիքին, հասարակությանը, դասարանին, դպրոցին, շրջապատին: Անհրաժեշտ է նաև նպաստավոր պայմաններ ստեղծել նրանց ուսուցման, դաստիարակության, անձի ձևավորման, զարգացման և սոցիալացման համար: Այստեղ մեծ դեր ունի ընտանիքը, դպրոցը և սոցիալական մանկավարժի ինստիտուտը:

Օժտված երեխաներն իրենց հասակակիցներից տարբերվում են մտավոր կարողություններով, ստեղծագործական մտածողությամբ և բարձր ընդունակություններով: Այս երեխաների մի մասն էլ իրենց բացառիկ ունակությունները դրսևորում են ոչ թե մեկ, այլ մի քանի ոլորտներում: Պատմությունից հայտնի են այդպիսի շատ օրինակներ, ինչպես՝ Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Տաթևացին, Լեոնարդո դա Վինչին, Մոցարտը, Լոմոնոսովը, Սենդելերը, Վիկտոր Համբարձումյանը, Սերգեյ Սերգեյանը, և ուրիշներ:

Օժտված երեխաներն իրենց տարեկիցների համեմատ՝ առանձնանում են մտավոր, ճանաչողական առումով, անսովոր արագությամբ յուրացնում են մարդկային փորձը, բայց երբեմն հետ են մնում ֆիզիկական և հոգևոր զարգացման առումով: Հաճախ մեծ է նրանց հակվածությունն այս կամ այն առարկայի նկատմամբ: Հոգեբանները երբեմն դա կապում են գեներտիկայի հետ: Կա նաև ավելի բարդ օժտվածություն, որը լուրջ դժվարություն է ստեղծում ծնողների և ուսուցիչների համար. այն առանձնանում է իր կրողի ինքնատիպ, ոչ ստանդարտ մտածողությամբ: Սա դժվարացնում է շուտ նկատելու և գնահատելու այդ ձիրքը [5, էջ 5]: Հոգեբանության մեջ քանի որ օժտվածությունը դիտում է որպես շեղվող վարքի տիպ, վերջինս բնորոշվում է հետևյալ առանձնահատկությունները.

- անհամաչափ (դիսսիմիտրոն) զարգացում,
- անհամապատասխանություն ինտելեկտի և հոգեկան զարգացման միջև,
- գերարժեքության բարդույթ,
- գերզգայունություն շրջապատի նկատմամբ,
- հոգեբանական օտարացում [1, էջ 21]:

Ըստ ստեղծագործական ակտիվության բա-

ցահայտման թեստերի, որոնք անցկացրել են ամերիկացի հոգեբանները, հատուկ մտածողության տեր մարդիկ բաժանվում են տարիքային հետևյալ խմբերի՝ մեծեր՝ 2%, դեռահասներ՝ 11%, 7 տարեկան՝ 17%, 6 տարեկան՝ 37%: Այստեղ օժտված երեխաների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեն հատկապես դպրոցը և ընտանիքը:

Պետք է տարբերել, մեր կարծիքով, ընդհանուր և հատուկ օժտվածությունը:

Ընդհանուր օժտվածությունն ընդգրկում է ընդունակությունների շատ լայն շրջանակ, որը ենթադրում է գործողությունների շատ տեսակներ: Իսկ հատուկ օժտվածությունը՝ երաժշտություն, սպորտային, մաթեմատիկա, գեղարվեստական և այլն, կախված է կոնկրետ այս կամ այն գործունեության ձևից:

Օժտված երեխաներին բացահայտելու համար պետք է բացել հոգեբանամանկավարժական հատուկ կենտրոններ, որոնք լայն աշխատանք կտանեն այդ երեխաների հետ, կախտորոշեն և կստեղծեն նրանց համար ուսուցման հատուկ մասնագիտացված ծրագրեր:

Յուրաքանչյուր երեխայի մեջ նստած է երաժիշտը, բանաստեղծը, նկարիչը, ստեղծագործող անհատը: Պետք է առաջին հերթին ընտանիքը, իսկ հետո մանկապարտեզն ու դպրոցը բացահայտեն նրա ընդունակությունները, կրթեն ու դաստիարակեն՝ ստեղծելով համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ և մանկավարժական պայմաններ:

Երեխայի օժտվածությունը միանգամից հնարավոր չէ բացահայտել: Այն, ըստ իտալացի հետազոտող Դ. Ռենզոլիի, ունի հետևյալ պատկերը. «Օժտվածությունը երեք բնութագրումների զուգակցում է՝ մտավոր ընդունակություններ, ստեղծագործական մոտեցում և հաստատակամություն» [4, էջ 156]:

Հոգեբանամանկավարժական գրականության մեջ ընդունվում են երեխաների օժտվածության հետևյալ տեսակները՝

1. սոցիալական,
2. գեղարվեստական,
3. հոգեշարժողական,
4. ակադեմիական,
5. մտավոր,
6. ստեղծագործական [2, էջ 122]:

Երեխաների օժտվածության այս տեսակները բացահայտելու և նրանց հետ լայն աշխատանք տանելու համար Հայաստանի բուհերի

համապատասխան ֆակուլտետներում և բաժիններում (սոցիալական մանկավարժություն, հոգեբանություն) պետք պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք կօգնեն նաև օժտված երեխաներ ունեցող ծնողներին, ինչպես նաև այն ուսուցիչներին, որոնց դասարաններում կան այդպիսի աշակերտներ, որպեսզի նրանք ճիշտ կազմակերպեն իրենց աշխատանքը:

1. Սոցիալական օժտվածությունը բարձրացնում է երեխաների պատասխանատվությունը, այն նաև կոչվում է լիզերային օժտվածություն, որն իր հետևից է տանում հասակակիցներին, առաջնորդում նրանց:

2. Գեղարվեստական օժտվածությունը բավականին լավ է ուսումնասիրված մանկավարժական գրականության մեջ (օժտված և հայտնի մարդկանց կյանքը և գործունեությունը), ինչպես նաև առաջավոր փորձը: Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին Ն. Ջվերը ստեղծել է պանսիոնատ, որտեղ ապրել և սովորել են՝ Ս. Ռախմանիցովը, Կ. Իգումովը, Ա. Սկոբաբինը և ուրիշներ [3, էջ 74]:

3. Հոգեշարժողական օժտվածությունը տանում է դեպի մարզական բարձունքներ: Գիտական գրականության մեջ փորձեր են արվում որոշելու երեխաների օժտվածության մակարդակը: Մեր կարծիքով՝ դժվար է տալ օժտվածության ժամանակակից մոդելը, որտեղ կարևոր են բարձր գիտելիքները, կարողությունները, հմտությունները, ընդունակությունները, դրդապատճառները:

4. Ակադեմիական օժտվածությունը երևում և ընդգծվում է ուսման մեջ, որը տանում է մասնագիտության ճիշտ ընտրության:

6. Ստավոր օժտվածություն ունեցող աշակերտների հետ ավելի շատ պետք է աշխատեն ուսուցիչները՝ օգնելով և աջակցելով, չխնայելով իրենց ուժերը և ժամանակը: Ստավոր օժտվածություն ունեցող երեխաները դպրոցում սովորում են գերազանց, ունեն վերլուծական մտածողություն, փաստերը համադրելու, արագ կողմնորոշվելու ընդունակություն: Նրանց աշխատանքը տալիս է բարձր արդյունքներ, դրավառ ապացույցը Հայաստանի դպրոցների աշակերտների և բուհերի ուսանողների ակտիվ մասնակցությունն է համաշխարհային օլիմպիադաներին և մեծաթիվ մեդալների շահումները:

6. Ստեղծագործական բնույթի օժտվածություն ունեցող երեխաներն իրենց դրսևորում են արվեստի, երգի, պարի բնագավառներում՝ երաժիշտներ են, նկարիչներ, երգիչներ, պարողներ, մասնակցում են տարբեր մրցույթների և ցուցահանդեսների, արժանանում են բարձր մրցանակների: Հայաստանում բոլոր պայմանները կան այդպիսի երեխաներին հայտնաբերելու և աջակցելու նրանց հետագա զարգացմանը: Գեղագիտական դաստիարակության կենտրոնը դրա լավագույն ապացույցն է: Մեծ գործ են կատարում նաև արվեստի և երաժշտական դպրոցները, քոլեջները և բուհերը, հատկապես Երևանի Կոմիտասի անվան կոմսերվատորիան, Գեղարվեստի ակադեմիան, Թատրոնի և կինոյի ինստիտուտը:

Օժտված երեխաների խոսքը շուտ է զարգանում, հարուստ է բառապաշարով, երևակայությունը վառ է ու պատկերավոր: Հարկավոր է նրանց նկատմամբ հատուկ ուշադրություն, պատշաճ վերաբերմունք և ճիշտ գնահատական:

Ամփոփելով կարող ենք ասել.

1. Երեխաների օժտվածությունն ի հայտ է գալիս ուսուցման և դաստիարակության գործընթացում:

2. Օժտված երեխաների հետ աշխատանքը հատուկ մոտեցում և որակավորում է պահանջում հոգեբանից և սոցիալական մանկավարժից:

3. Սոցիալական մանկավարժը և հոգեբանը պետք է օգնեն օժտված երեխաներ ունեցող ծնողներին, տան խորհրդատվություններ, բարձրացնեն ծնողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակ օժտված երեխաների կրթությունը, դաստիարակությունը, զարգացումն առավել որակով և արդյունավետ կազմակերպելու համար:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Մ. Ս., Շեղվող վարքի հոգեբանությունը դասընթացի ուսումնական ծրագիր, Եր., 2011, էջ 23:
2. Василькова Ю. В., Методика и опыт работы социального педагога, М., 2011.
3. Григорян А. А., От трех до семи, Е., 1986.
4. Кукушкин В. С., Теория и методика обучения, Рна/Д, 2005.
5. Рабочая концепция одаренности, М., 2003.

ՕԺՏՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԳԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԴՊՐՈՑՈՒՄ

*Թամարա Հարությունյան*

*ԵՊՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու*

Ամփոփում

Օժտված երեխաների հիմնախնդիրները միշտ էլ եղել են մանկավարժների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Սակայն այսօր դրանք է՛լ ավելի արդիական նշանակություն են ձեռք բերում, որովհետև այդ երեխաների հետ աշխատանք իրականացնելիս լուրջ դժվարությունների առաջ են կանգնում և՛ ծնողները, և՛ ուսուցիչները:

**Բանալի բառեր.** օժտված երեխա, շեղվող վարք, մտավոր, գեղարվեստական օժտվածություն:

---

ПРОБЛЕМЫ ОДАРЕННЫХ ДЕТЕЙ В СЕМЬЕ И В ШКОЛЕ

*Тамара Арутюнян*

*Доцент кафедры педагогики ЕГУ, канд. пед. наук*

Резюме

Проблемы одаренности детей всегда были в центре внимания педагогов и психологов. Но сегодня они стали более актуальными, потому что работа с одаренными детьми для родителей и для учителей становится очень трудной.

**Ключевые слова:** одаренный ребенок, отклонения поведения, умственный, художественная одаренность.

---

ISSUES OF GIFTED CHILDREN AT HOME AND AT SCHOOL

*Tamara Harutyunyan*

*Associate professor of the Department of Pedagogy of YSU, Candidate of pedagogical sciences*

Summary

Issues of gifted children are always in the focus of teachers and psychologies. Today this have much more contemporary significance, because parents and teachers faced with a real difficulties in carrying out with their kids.

**Keywords:** Gifted children, point behavior, intellectual, artistic talent